ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

7 դեկտեմբերի 2016թ. թիվ 293

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ
ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.15 կետի «ժա» ենթակետով, համաձայն ՀՀ Լոռու մարզպետարանի և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Լոռու մարզային գործակալության համատեղ աշխատանքային ծրագրի, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 06.12.2016թ. թիվ 01/15.1/5399-16 հանձնարարականը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Լոռու մարզի համայնքներում և բոլոր կարգի տնտեսություններում 2017թ. հունվարի 1-18-ը անցկացնել անասնագլխաքանակի համատարած հաշվառում:

2. Հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետում և պատշաճ մակարդակով իրականացնելու համար առաջարկել՝

1) Լոռու մարզի բոլոր համայնքների ղեկավարներին՝

Մինչև ս/թ դեկտեմբերի 30-ը կազմել անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողովներ՝ դրանց կազմում ընդգրկելով նաև տվյալ համայնքը սպասարկող անասնաբույժին:

Անասնագլխաքանակի հաշվառման արդյունքները մինչև 2017թ. հունվարի 20-ը ներկայացնել Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության Լոռու մարզային գործակալություն:

2) ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Լոռու մարզային մասնաճյուղի տնօրեն Ա.Մուրադյանին՝

Մարզի համայնքներում ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Լոռու մարզային մասնաճյուղի անձնակազմի միջոցով վերահսկել անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքները:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ.Հակոբյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 7
ք.Վանաձոր